ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱԽՏԱՀԱՆԻՉՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԳՆ-ԾՀԱՊՁԲ-11/5-25-ԱԱԱ-6

ք. Երևան 22 01 2014 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<Բիո Ունիվերսալ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Սահակյանի (այսուհետև՝ Վաճառող), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի Ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ 460240094.5 (չորս հարյուր վաթսուն միլիոն երկու հարյուր քառասուն հազար իննսունչորս) ՀՀ դրամ և (հիսուն) լումա՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N 2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ

ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը, համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Ընդ որում, գնման պայմանագիր կնքած անձը ներկայացնում է սույն պայմանագրի N 1 հավելվածով ապրանքների ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Սակայն եթե այդ ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի պահանջվում: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 %-ի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 %-ի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.3.1 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանված է ՀՀ զյուղատնտեսության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 24-ի N 186-Ա հրամանով:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 5 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ք. Երևան, Կառավարական N 3 շենք Ֆինանսների Նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎ 900011008381 ՀԿՀՀ 02508046 Աշխատակազմի ղեկավար՝ _____ Ա. Կիրակոսյան (ստորագրություն) Կ.Տ	<<Բիո Ունիվերսալ>> ՍՊԸ ք.Երևան, Ավանեսովի 2/1 շին. 44 Հեռ. 47-40-30 «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ ՀՎ 2380021067280100 ՀԿՀՀ 00445672 Տնօրեն՝ _____ Տ. Սահակյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
<<22>> հունվարի 2014 թ. կնքված
N ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-11/5-25-ԱՄՀ-6 պայմանագրի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱԽՏԱՀԱՆԻՉՆԵՐԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին	Միջոցառման կամ ձեռք բերվող ապրանքի անվանումը	Չափի միավորը	Տեխնիկական բնութագիր
1	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ՝ բազմավալենտ, սորբինացված, կուլտուրալ, ակտիվազրկված պատվաստանյութ Ա Իրան-2005, O-Պան Ասիա-2, Ասիա-1 - Վրաստան 2001 տիպերի դեմ կամ համարժեք: Արտաքինից իրենից ներկայացնում է բաց դեղնավուն գույնի հեղուկ, սպիտակ նստվածքով, որը թափահարելուց հետո հեշտ լուծվում է: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման և պիտանելիության ժամկետները և դոզաները: Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի 10 ամսից ոչ պակաս, իսկ պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը +4^0 C-ից մինչև +8^0 C, PD_{50}-6 միավորից ոչ պակաս: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է:Պիտակի վրա նշված լինի <<պետական պատվեր>> բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:
12	Կաուստիկ սոդա	կգ	Ակվայի է, անգույն բյուրեղային նյութ,սպիտակ գույնի, կտրվածքում ճառագայթաձև կառուցվածքով:
13	Ախտահանիչ նյութեր	կգ	Բաղկացած է կալցիումի հիպոքլորիդից, կալցիումի քլորիդից և

			օքսիհիդրատից տարբեր հարաբերություններով, կախված արտադրության տեխնիկական և պահպանման պայմաններից: Սպիտակ կամ մոխրագույն փոշի է՝ քլորի հոտով: Ջրում լուծվում է մասամբ:
14	Ախտահանիչ նյութեր	կգ	Իրենից ներկայացնում է անգույն հեղուկ, յուրահատուկ հոտով, որը պետք է պարունակի 35-40% ֆորմալդեհիդ:
15	Փորձանոթներ	հատ	Գլանաձև, 10 մլ.տարողությամբ, հրակայուն ապակյա անոթ՝ բազմակի օգտագործման համար՝ ապակյա առարկաների համապատասխան փաթեթավորմամբ:

ԳՆՈՐԴ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Կառավարական N 3 շենք

ՀՀ Ֆինանսների Նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՎ 900011008381

ՀՎՀՀ 02508046

Աշխատակազմի ղեկավար՝

_____Ա. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Բիո Ունիվերսալ>> ՍՊԸ

ք.Երևան, Ավանեսովի 2/1 շին. 44

Հեռ. 47-40-30

«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի

խումբ» ՓԲԸ

ՀՎ 2380021067280100

ՀՎՀՀ 00445672

Տնօրեն՝

_____Տ. Սահակյան

(ստորագրություն)

Կ.Տ

Գնման ժամանակացույց

Նախատեսության, գերատեսչության, սեռական կառավարման առաջնային մարմնի անվանումը՝

Իրականացվող ծրագիրը՝ 07. Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում

Հավելված N 2
«22» նոյեմբեր 2014 թ կրճատ
N 22 ԳՀ-ՇՀԱՊՁԲ-115-25-4/4/1 - 6 պայմանագրի

Բաժին 04, խումբ 02, դաս 01

Ծրագիրն իրականացնող հիմնարկի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Հասցեն՝ Կառավարական տուն 3

N	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումը			Նախատեսվում է գնել 2014թ.				Ընդամենը	
Չափաբաժին	Անվանումը	Չափման միավորը	Միավորի նախահաշվ ային գինը	I եռամսյակ		II եռամսյակ		քանակ	գին
				քանակ	մոտավորապես ամսաթիվ կամ վերջնաժամկետ	քանակ	մոտավորապես ամսաթիվ կամ վերջնաժամկետ		
	1	2	3	4	5	6	7	8	9
1	Առնասաբուծության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	216.5	1000000	15.03.2014թ	1072333	02.06.2014թ	2072333	448660094.5
12	Կատաղի տոզա	կգ	600	1000	31.03.2014թ			1000	600000
13	Ախտահանիչ նյութ	կգ	830	1000	31.03.2014թ			1000	830000
14	Ախտահանիչ նյութ	կգ	550	1000	31.03.2014թ			1000	550000
15	Փոլիաներթներ	հատ	96	100000	31.03.2014թ			100000	9600000
	Ընդամենը	x	x	x	x	x	x	x	460240094.5

Գնորդ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀ 900011008381
ՀԿՀՀ 02508046
Աշխատակազմի ղեկավար՝
_____ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ
ք.Երևան, Ավանեսովի 2/1 շին. 44

«Առիկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
ՀՎՀ 23800210672801 00
ՀԿՀՀ 00445672
Տնօրեն՝
_____ Տ. Սահակյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«22» հունվար 2014 թ նրված
N 22.01.2014ՊՀ-115-25-գնման-6 պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝

Իրականացվող ծրագիրը՝ 07. Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում

Բաժին 04, խումբ 02, դաս 01

Ծրագիրն իրականացնող
հիմնարկի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Հասցեն՝ Կառավարական տուն 3

N	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումը			Նախատեսվում է վճարել 2014թ		Ընդամենը
Հաջորդական	Անվանումը	Չափման միավորը	Հայված	I եռամսյակ	II եռամսյակ	
				գումար	գումար	դրամ
	1	2	3	4	5	6
1	Առանաբուծության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	4266	305000000	460240094.5	460240094.5
12	Տուբերկուլին սորա	կգ				
13	Ախտահանիչ նյութ	կգ				
14	Ախտահանիչ նյութ	կգ				
15	Փորձանոթներ	հատ				
	Ընդամենը	x	x	x	x	460240094.5

Գնորդ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
հ/հ 900011008381
ՀՎՀՀ 02508046
Աշխատակազմի ղեկավար՝
_____ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ
ք.Երևան, Ավանեսովի 2/1 շին. 44
«Առէկսիմբանկ Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
հ/հ 23800210672801 00
ՀՎՀՀ 00445672
Տնօրեն՝
_____ Տ. Սահակյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 4

«04» հունվար 2014 թ.կնքված

N ՀՀ ԳՆ-ԾՀԱՊՁԲ-11/5 25 ԱԱԿ-6 պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Կատարողը ի դեմս_____,

հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.